

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/3**

**17 հունվարի 2017թ.**

Քննարկվեց «Կյանքի հաց բարեգործական» ՀԿ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 13.10.2016թ. թիվ 1011054 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 29.07.2016թ. թիվ 1011054 հանձնարարագրի համաձայն «Կյանքի հաց բարեգործական» ՀԿ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 13.10.2016թ. թիվ 1011054 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 7.430.675 դրամ:

Սույն գործին առնչվող փաստական հանգամանքների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Ակտի դեմ բերված գանգատի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ընկերության կողմից ներկայացված և սույն գործին անմիջականորեն առնչվող փաստաթղթերի վերաբերյալ: Մասնավորապես, Հանձնաժողովին է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 22.12.2016թ. թիվ ԼԴ/1444/02/16 վճիռը, որի համաձայն Գ.Աքույանի և «Կյանքի հաց բարեգործական» ՀԿ միջև 2014թ. մայիսի 15-ին կնքված Լոռու մարզի, ք.Վանաձոր, Աբեղյան 21-2 շինությունների առուվաճառքի պայմանագիրը ճանաչվել է անվավեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գ.Աքույանի և «Կյանքի հաց բարեգործական» ՀԿ միջև 2014թ. մայիսի 15-ին կնքված Լոռու մարզի, ք.Վանաձոր, Աբեղյան 21-2 շինությունների առուվաճառքի պայմանագիրն անմիջականորեն առնչվում է սույն գործին, հետևապես գանգատի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ կասեցնել գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը, մինչև թիվ ԼԴ/1444/02/16 գործով վերջնական դատական ակտի ընդունումը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«Կյանքի հաց բարեգործական» ՀԿ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**